ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«----» հոկտեմբերի 2011թ. **N------ -Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 16-Ի N4272-Ա ՈՐՈՇՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետին համապատասխան.

Երևան քաղաքի ավագանին *որոշում է.*

Համաձայնություն տալ Երևանի քաղաքապետի 2011 թվականի սեպտեմբերի 16-ի ««Թիվ 4 բուժանմաս» փակ բաժնետիրական ընկերության միացման պայմանագիրն ու փոխանցման ակտը հաստատելու և Երևանի քաղաքապետի 2010 թվականի ապրիլի 21-ի N1657-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N4272-Ա որոշմանը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ- ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 16-Ի N4272-Ա ՈՐՈՇՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևանի քաղաքապետի 2011 թվականի սեպտեմբերի 16-ի N4272-Ա որոշմանը համաձայնություն տալու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի մայիսի 6-ի «Թիվ 4 բուժսանմաս» և «Թիվ 13 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությունները միացման ձևով վերակազմակերպելու մասին» N234-Ա որոշման 2-րդ կետով նախատեսված առաջարկությամբ:

«Թիվ 13 պոլիկլինիկա» և «Թիվ 4 բուժսանմաս» փակ բաժնետիրական ընկերությունների վերակազմակերպման արդյունքում անհրաժեշտություն է առաջանում համապատասխան փոփոխություններ կատարել «Թիվ 13 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կանոնադրության և հաստիքացուցակի մեջ:

«Թիվ 13 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի հաստիքային միավորները մինչև վերակազմակերպումը կազմում էին 129 միավոր, իսկ «Թիվ 4 բուժսանմաս» ՓԲԸ-ինը՝ 32 միավոր:

Վերակազմակերպման արդյունքում «Թիվ 4 բուժսանմաս» ՓԲԸ-ի 32 հաստիքային միավորներից 22-ը ավելանում են «Թիվ 13 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի հաստիքային միավորներին, գլխավոր հաշվապահի հաստիքը վերափոխվում է գլխավոր հաշվապահի տեղակալի հաստիքի, իսկ 10 հաստիքային միավորներ կրճատվում են, որից՝

1) 3 հաստիքային միավոր (1 տնօրենի և 2 պահակի) թափուր են,

2) 1 հաստիքային միավորի (սանիտարկա) աշխատակիցը տեղափոխվել է «Թիվ 13 պոլիկլինիկա» ՓԲԸ-ը՝ թափուր հաստիքի վրա,

3) 2 հաստիքային միավորների (1 պահակ, 0.5 վիրաբույժ և 0.5 քիթ-կոկորդ-ականջաբան) աշխատակիցներ ազատվել են անձնական դիմումների հիման վրա,

4) 4 հաստիքային միավորները (0.75 կադրերի տեսուչ, 3.25 նեղ մասնագետներ) աշխատել են համատեղությամբ և կշարունակեն իրենց աշխատանքը հիմնական աշխատավայրում։

Արդյունքում կրճատվող հաստիքային միավորների բոլոր աշխատակիցներն ապահովվում են աշխատանքով։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 16-Ի N4272-Ա ՈՐՈՇՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի սեպտեմբերի 16-ի N4272-Ա որոշմանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չկա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 16-Ի N4272-Ա ՈՐՈՇՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի սեպտեմբերի 16-ի N4272-Ա որոշմանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ